ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2022 թվականի
դեկտեմբերի 22-ին

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահութահարկի մասին» 1999 թվականի հունվարի 9-ի ՀՕ-47 օրենքի (այսուհետ՝ Օրենք) **2-րդ հոդվածի** «պետական բյուջե» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական բյուջե (այսուհետ՝ պետական բյուջե)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «5 տոկոս դրույքաչափով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում լիցենզավորված գործունեության տեսակների, որոնց մասով 2023 թվականի համար սահմանվում է 10 տոկոս դրույքաչափ» բառերը.

2) 2-րդ մասում «վառելիքաէներգետիկ» բառից առաջ լրացնել «ԱՏԳ ԱԱ 7401 00 000 0, 7402 00 000 0, 7403, 7405 00 000 0, 7406 ծածկագրերին դասվող արտադրատեսակների արտադրության,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 55-րդ հոդվածի 3-րդ մասից «պետական բյուջե» բառերից առաջ հանել «Արցախի Հանրապետության» բառերը:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետը գործում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 29
Ստեփանակերտ
ՀՕ-102-Ն